նագութն գթասցի, ամենողորմն շարժեսցի զբեկեալ սիրտ Հայոց բերկրեցուցանել, տալով վերստին զվիճակն սուրբ՝ զվանս առաքելոյն Յակոբայ, եկայք առ գերեզմանն իմ, աւետեցէ՛ք զմեծ խրախութեան աւետիսդ, զի զովասցի պապակեալ անձն իմ հոգմամբ որ և տրտմալից։ Ո՞վ որդեակ իմ, գրեա՛յ զայս ամենայն ի մատենի քում առ յիմոյ յիշատակի և լա՛ց ընդ մահտեսի մարդդ, զի աշխարհ մի ասասցէ ինձ անորդի ի կեանս ցաւալից։ Ո՞վ սիրասունդ, բաւ է այդքան կոծն քո առ տառապեալ հայրս[1]) քո, զի ո՞վ է որ ոչ չուեաց յունայն կենցաղոյս՝ զի ես մնացից։ Տա՛ւք զհողն ի վերայ հողոյս և աղօթեցէ՛ք վասն ոգոյ թշուառացելոյս, զի ես ճանապարհորդեցի երթալ առ Արարիչն իմ և ի Քրիստոս յոյսն ամենեցուն։ Զայս ամենայն ասէր և կական բարձեալ արտասուաթոր աչօք եւ յոյժ ողորմուկ՝ նկատելով զմերձ նստեալսն առ նայ։ Եւ մեր խոնարհեցուցեալ զգլուխ ընդ ասացելոցն բանից, սիրաք մեր ճմլէին և փղձկանս[2]) հարեալ զբողոք բառնայաք, զի զվերջին աւրհնութեան տեսս և զհրաժարականն մատուցանէր զողջոյն։ Բայց յառաւել սիրոյ նորա ամփոփէաք մերթ առ խօսս ինչ եւ մերթ ապա յարտասուս կսկիծ, զի մի նուաղեսցի տեսեալ զմեզ հառաչալից։ Եւ ապա ծանրանայր ցաւօք և թեթևանայր մարմնով ի կերակրոց և յըմպելեաց. և յերրորդ ժամու յաւուր Դշի[3]), որ Նոյեմբեր ամսոյ յերրորդի աւանդեաց երանելին զհոգին ի ձեռս հրեշտակաց Աստուծոյ ուղիղ դաւանութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ի մարմին եւ յարիւն նորա միանալով բովանդակապէս եւ նորայն փառաւորակից։ Եւ զայն օր թողեալ և երեկոյէ մինչև յառաւօտ պաշտամամբ և պա-

1) հարս. 2) փղցկանս. 3) Զշի.